

րում» կը գործէին: Փո՛քր, շա՛տ փոքր մարդեր, ատոնք, Մենծ Մաթիկի հաւաստումով, որուն ջերմութիւնը ծաւալական չէր իր շրջապատին, քանի որ գիտենք, թէ հոն էին անոնք, Տարօնի եւ Վասպուրականի մէջ, կռիւը կրելով ամէն օր, աշխարհք մը թշնամիի դէմ, մինակնին ու չընկրկելով: Միալակա՞ն, խի՞ստ, անփափկանկա՞տ, կո՞շտ: Ատոնք սիրուն հարցումներ են ու շատ ալ ճահնաւոր ընթերցազանց ժողովներուն կամ բանախօսական հանդէսներու մէջ: Այդ սարերու գլխուն, ուրկէ կու գար անոնց ձայնը, որոնք զարնուած էին Մաթիկի մեծ փառասիրութեան, ամէնէն ուշ պիտի յիշուին այդ քիչ մը խորթ առաքինութիւնները: Միալակա՞ն, խի՞ստ... Ո՞րը չէ մենէ: Բայց քանի՞ հոգի, անոնք, որ զրահուած իրենց թերութիւններուն ժանիքներովը, ներելով մեր վայելքները մեզի, մեր նախատինքն ալ՝ իրենց, մտան տագնապէն ներս, անպատկերելի խստութեանց մէջ խարխլած, իրենք իրենց դէմ, ո՛ւր մնաց Մաթիկներուն, որոնք կը մատնուէին ճղճիմ իրենց մարմիններէն, ինչպէս նաեւ մեծ իրենց ուղեղներէն: Շատ հազուադէպ է, որ մարդիկ պահեն իրենց հոգեկան կշիռը հաւասար, մերինին նման հզօր ձախորդութեան առջեւ: Ու ճիշդ է միւս վարկածը, որ մարդոց մեծութիւնը համեմատական կ'ընէ տագնապի պահուն անոնց կորանքին: Մելիքխանեանցը, իր ատելութեանց թափէն բռնավար, չէր խորհեր իր ալ խստութեան, երբ նման ամէն նորագիր մարտիկի, միջավայրի փոփոխմամբ առաջացած անդաշնութիւնները կը մեծցնէր չափազանց, անոնց պատասխանատուութիւնը բեռնալով մարդոց, որոնք ուրիշ բան չէին, եթէ ոչ իրեն նման պայքարի իջած սրբազան խենթեր: Ինչ որ յեղափոխական Մաթիկին անձը կ'ընէ շահեկան, այն վկայութիւնն է, զոր ես ունեցայ իր ուսումէն, տասնհինգ երկար օրեր: Նիւթն էր մեր պայքարը թուրքին դէմ, զոր կը զգար տարտամ: Նիւթն էր պայքարի մեր գործիքը, մեր յեղափոխութիւնը այս դարուն սկիզբը: Երեսուն տարի ետք, կուսակցական արխիւներու բացումը հանդէսներու էջերուն, անհա-